



28 Յունիս 2010

Նամակ Թիւ 137/10

Արուեստի Երեկոյ

Հիւսիսային Էմիրութեանց Ազգային Վարչութեան Գեղարուեստական Յանձնախումբը հաճոյքն ունի յայտարարելու, որ այս վերամուտին՝ Հոկտեմբեր 2010-ին, կը նախաձեռնէ կազմակերպել “Արուեստի Երեկոյ” մը Համալիրի Քէօսէան սրահին մէջ: Երեկոյթին իրենց մասնակցութիւնը կրնան բերել գաղութի բոլոր տաղանդաւոր անդամները:

Առանց տարիքի խտրութեան փափաքողները կրնան անհատական կամ խմբային կազմով մասնակցութիւն ունենալ: Մասնակցողներէն կը պահանջուի 2-5 վայրկեան տեսողութեամբ արուեստի պատկեր մը ներկայացնել ինչպէս՝ նուագ, երգ, պար, արտասանութիւն, զաւեշտ կամ այլ ինքնատիպ նմոյշ մը:

Առիթ պիտի տրուի միայն լաւ պատրաստուած մեկնաբանութիւններուն:

Անոնք որոնք կ’ուզեն մասնակցիլ այս ձեռնարկին, թող բարեհաճին յայտարարութեան կցուած յայտը ամբողջացնել եւ մինչեւ Երեքշաբթի, 28 Սեպտեմբեր 2010, ներկայացնել Համալիր Պրն. Տաթեւ Սուլեւանին:

Յայտերը կրնաք նաեւ ուղարկել հետեւեալ Ե-Նամակին՝ (E-mail) armcom@emirates.net.ae կամ հեռապատճենի թիւին՝ (fax) 06-5660790:

Հիւսիսային Էմիրութեանց
Գեղարուեստական Յանձնախումբ

Մասնակցութեան Յայտ	
Անուն/ Անուններ եւ Տարիք	
Ներկայացման Թեմա	
Հեռաձայնի թիւ	